Հարց ու պատասխան

Հետաքրքրվածության արտահայտման հայտի ներկայացման հրավեր CSA-EOI-CBO-2024-001

1. **Հարց՝** հետաքրքրվածության արտահայտման հայտը ներկայացնելիս պարտադի՞ր է ունենալ կազմակերպության եզակի նույնականացման UEI համարը:

   Պատասխան՝ տե՛ս Հետաքրքրվածության արտահայտման հայտի ներկայացման հրավեր CSA-EOI-CBO-2024-001-ի էջ 4-ի ԲԱԺԻՆ III-ը և էջ 5-ի ԲԱԺԻՆ IV-ը:

2. **Հարց՝** տեքստում նշված է, որ մասնակցել կարող են կառույցներ, որ «գրանցված են այն մարզում, որտեղ ծավալում են գործունեություն»: Արդարադատության նախարարության պետռեգիստրում չե՞ն գրանցվում բոլոր կազմակերպությունները:

   Պատասխան՝ դիմող կազմակերպությունը պետք է իր գործունեությունը ծավալի նշված մարզերից (*Արագածոտն, Լոռի, Շիրակ, Սյունիք, Տավուշ, Վայոց Ձոր*) որևէ մեկում:

3. **Հարց՝** հնարավո՞ր է ստանալ ծրագրի նկարագրի բացվածք կամ օրինակներ:

   Պատասխան՝ այդ մասին նշված է հայտարարության 2-րդ էջ-ին:

4. **Հարց՝** նպատակների ձևակերպմանը հաջորդող պարբերությունը կամ նկարագրությունն ավելի շատ խոսում է հանրային քաղաքականության մասին: Արդյո՞ք այս նպատակն է գերակա նշված չորս նպատակներից:

   Պատասխան՝ չորս նպատակները «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի նպատակներն են:

5. **Հարց՝** համաձայն փաստաթղթի՝ ծրագրի տևողությունը մեկ տարուց ավելի կարճ է: Խնդրում ենք մանրամասնել, թե ինչպես է պետք բյուջեում պլանավորել մեկ տարվա ընթացքում նախատեսվող գործուղման ծախսերը:

   Պատասխան՝ ծրագրի տևողությունը կարող է լինել առավելագույնը 12 ամիս: Անկախ ծրագրի տևողությունից՝ հայտատուն պետք է բյուջեում ներառի միանվագ գումար 12 ամիսների ընթացքում դեպի Երևան և հետադարձ չորս ճամփորդության համար: Բյուջեի այս տողը նախատեսված է բացառապես կազմակերպական զարգացման գործողություններին առնչվող ճանապարհածախսը հոգալու համար:

6. **Հարց՝** հնարավո՞ր է տեղեկանալ գործուղումների տևողությանը, նախատեսվող աշխատանքների թեմաներին՝ ծախսերը և ծրագրի ընթացքը ճիշտ պլանավորելու համար:

   Պատասխան՝ բյուջեում ներառել միայն միանվագ գումար 12 ամիսների ընթացքում դեպի Երևան և հետադարձ չորս ճամփորդության համար: